

ԿՈՄԻՏԱՍԱՅԻՆ

«Մի ամբողջ կոնսերվատորիա է նա» . այսպէս էին բնութագրել ժամանակակիցները Կոմիտասին :

Ինքնամափառ կոմպոզիտոր, երաժիշտ-մշտածող, ժողովրդական երգերի անփոխ հաւաքող, ոգեշնչուած երգիչ և երգչախմբի վարիչ, մանկավարժ և լուսաւորիչ՝ արտակարգ բազմաչեղոր էր Կոմիտասի ըստեղծագործական անձը : Նրա բազմաբեղուն և արդինաշատ գործունէութիւնը Հայ երաժշտութեան պատմութեան մէջ մի ամբողջ դարաշրջան կազմեց և իր նշանակութեամբ երաժշտական ասհմաններից հեռու ատրածուեց :

Կոմիտասը խորասէս գիտակցել է ժողովրդական երաժշտութեան՝ որեւէ ժողովրդակի մշակութիւնը ինքնատպութիւնը հաստատող նշանակութիւնը : Ժողովրդական երաժշտութիւնը նա բարձր էր գնահատում նաև որպէս կոմպոզիտորական արուեստը գարգաներու միջոց : «Ժողովրդական երգը կոչուած է մէն զեր խաղալու ապահայի ուղիղ երաժշտութեան ճանապարհը գծելու գործում», որին է նաև, արդէն իսկ ճանաշած լինելով Ձեր դարասկեզրի եւրոպական երաժշտական արուեստը :

Դեռեւս պատմանեկան տարիներից, արտասովոր եւանդով արուերով ժողովրդական երգեր հաւաքելուն, նա բացայացնեց հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործութեան անձանաւ չերտուր, յարտնաբերեց այդ վագենի արուեստի զաղափառական բովանդակութեան և արդարացամիջոցների ողջ բազմաբեղունթիւնը, նրա սճը : Իր ազգադրական ժառանգութիւնը անձինք այն մի պատկանակի հասուածուածեց այն մուծեց հայագիտութեան բնապաւառը և զգալի ներդրում կատարեց նաև համաշխարհային խորութիւնը, առաջ եւ պարզ ըստու է՝ ժողովրդական նիւթի վըրայ կոմպոզիտորի ստեղծագործական անդաստականութեան զօրեղ ներգործութիւնը :

Հայոց երաժշտութեան Փոյլորի մի շաբաթականը լինելով կապարագութեամբ, որն օժտուած է պայտացին:

Հայոց երաժշտութեան Փոյլորի մի շաբաթականը լինելով կապարագութեամբ, որն օժտուած է պայտացին:

բակենդանացումը կոմիտասի կողմէից՝ իւրաւացիօրին հուասարեցւում է պատմամշակութային խոյոր յայտնագործութիւնների : Երաժշտական ազգագրութիւնն մնաւառում կոմիտասի նշանակութիւնն առաւել եւս մեծացաւ նրանով, որ հիմնովին խմաստութերու ժողովրդական երաժշտուած թեան օրինաշամփութիւնները, Հայ երաժշտական Փոյլորի մասին գրած իր յօդուածներով նա սկզբունքային նոր ու կարեւոր շատ բան մոցուց ժողովրդական ստեղծագործութեան վերաբերող պիտութեան բնդհանուր մելոդարանութեան մէջ :

Ժողովրդական երաժշտութիւնը հիմք ծառայեց Կոմիտաս-կոմպոզիտորի ստեղծագործութեան համար : Կոմիտասու տառակարը կերպով բարձրացրեց ժողովրդական երգի ժակուուղ կոչուող գեղագիտական նշանակալիութիւնը : Նրա մէներգային և խմբային մշակումներում նկատելի է ժողովրդական ստեղծագործութեան կենսաւեան զօրութեան և բնորոշ առանձնահատկութիւննը, բայց եւ պարզ ըստու է՝ ժողովրդական նիւթի վըրայ կոմպոզիտորի ստեղծագործական անդաստականութեան զօրեղ ներգործութիւնը :

Դրա չնորհիւ ժողովրդական պարզուեկ երգերը կոմիտասի զրչի տակ վերածուել են դրամատիկական մէնախօսութիւնների (Անտուենի, Միքանի ծառ, Ալագեազ բարձր սարին), ողբերգական կամ, Հակառակ՝ ուրախ միքայիլ պատումների (Գարուն ա. ծուն և արել, Թիեր, ցուեր իմ ծառը, Հօյ Խոպան), գեղջուկի աշխատանքին նուիրուած ծօնների (Գութանիերզ, Կալիթը եւ սայյերզ, Լոռու հորպիլ), նաևակետական ծէսերը նկարագրող ծաւալուն կուաների (Առաւուն բարի լոյս, Հարսանեկան շարեգեր, Վիճակի երգեր), ինչպէս նաև՝ կենցագային բնութագրական պատկերների (Գեղջուկ պարերդերի շարերը) եւ այլն :

Գեղարվուեստական բարձր արժէք ունեն նաև կոմիտասի՝ հոգեւոր երգերի մշակումները, երգեր՝ որոնք նա գրի առել կամ վերականգնել է իրենց երրեմնի ժողովրդա-

կան կերտուածքով (այդ մշակումների մէջ է նրա «Պատարագ»ը, արական խմբի համար դրուած ընդարձակ մեսան)։ Անշուշտ, կոմպոզիտորի տաղանդն է եկել նաև ոյնպիսի ստեղծագործութիւններում, որոնք անմիջական կազ չունեն ժողովրդական սկզբանարիրք հետ (անաւառ Անուշ սպերայի հաստածները, Քաղաքավարութեան վիսանինը կոմիկական պատկերները, Առ գետ Բարելացոց սաղմուս, Ո՞ւր եւ զախ, այց գարուն խմբերային պէտք եւ այլն)։

Այս բոլոր գործերում խորապէս տպաւորի կերպարներով ներկայացուած են Հայաստանի ժողովրդի կենաքի խմստ ինքնառփակ էջեր։ Դրանցում յուղականութիւնը ազնուօրէն զուսպ է, արտայայտումը՝ պարզ, բնութագրական ազդային լեզուն թարմ է, երաժշտական ձեւը կատարեալ, յգկուած։ Գոյների ու երանցների նրբութիւնը եւ շարադրանքի թեթեւութիւնն ու նրբագեղութիւնը ընդգծում են բովանդակութիւնը, խմբերգերում բարձր կատարեւութեամբ է ներկայացուած ակտակելլա գըրութեան արուեստը։

Կոմիտասը վճռականօրէն մերժեց կոմպոզիցիայի աւանդական միջոցները։ Իր շատ երկերում նա կիրառել է հարմոնիայի եւ պոլիֆոնիայի բացառիկ ինքնառփակ, և այն ժամանակուայ երաժտական երաժշտութեան համար նորութիւն հանդիսացած հընաներ, որոնք արտակարգ թարմ հնչում են տուել այդ երկերին։

Կոմիտաս-Կոմպոզիտորը Հայ երաժշտթեան դասական հեղինակ է։ Միաժամանակ, նա համաշխարհային երաժշտական ժակոյթի խմստ հետաքրքրական ու ինքնառփակ երեւոյթներից է, որ մինչեւ հիմա, դժբախտաբար, գեռ քիչ է ճանաչուած։

Հայրենի երաժշտակէտները Կոմիտասի կեանքը յաճախի բնութագրել են նաև որպէս սիրապործութիւն։ Այդ բնութագրութիւնն ակնարկում է ոչ միայն Կոմիտասի երաժշտական յանդուպն յայտնադրութիւնները, այլև այն գժուաւթիւնն պայմանները, որոնք ամբողջ կեանքը ընթացքում հետապնդեցին բարձր արուեստի համար մաքառութեամբ, իր ժողովրդի երաժշտական մշակու-


թի գորգացման համար պայքարող արուեստագէտին։

Կոմիտասի մկրտութեան անունը Սոլոմոն Սողոմոնեան էր։ Ծնուեց 1869 թուականի Սեպտեմբերի 26-ին Քէօթահայում (Հայունակ քաղաք Անատոլիայում), արուեստով ընորդուած, բայց աղքատ ծնողների ընտանիքում (Հայրն արքանուաւոր էր)։ Տաննէկ տարեկան հասկում որրացաւ։ Մէկ տարի յետոյ նրան բերեցին կիմիամծին եւ ուսման տուին Գէորգեան հոգեկոր ճեմարան։ Շուտով պատանին երդի և երաժշտութեան արտակարգ ընդունակութիւններ երեւան բերեց։ Կաթողիկոս Սկրտչչ Խրիմեանը տեսնելով այդ, ամէն կերպ աջակցեց տղայի ընդհանուր եւ երաժշտական ուսմանը։ Տեղինում ստացած եռամեայ բարձրագոյն կրթութիւնը նրան դարձրեց բազմահմուտ մասնակիս։ Խակ յետոյ՝ ճեմարանում մանկավարժական երկարամեայ հիւծիչ աշխատանք, վանքի երդշախմբի հետ անվերջ պարագանք. . .

Էջմիածնում Սողոմոնը հոգեւոր կոչում էր ընդունել։ Հենց այս առիթով էլ ստացել էր 7-րդ դարի Հայ նշանաւոր երաժիշտ ու ճարտարապետի անունից առնուած իր՝ Կոմիտաս անունը։

Նա վարդապետ էր։ Բայց նա եկեղեցու սովորական սպահաւոր չէր։ Հոգեւոր կոչում ունենալով, նա չուզեց սահմանափակել իր երաժշտական լուսաւորական, ըստեղծագործական ու արտիստական (կատարողական) լայն գործունէութիւնը։ Իր համոզութիւններով ու գործունէութեան բուն խոյթով նա քաղաքացի-արուեստագէտ էր բայիս լիակատար իմաստով։ Նրա գործունէութիւնն իր բոլոր բնագաւառներում մէկ միասնական նպատակ հետապնդեց՝ փառարանել ժողովուրդը, զեր հանել ու ցոյց տալ նրա հզօր ստեղծագործ ուժքը։ Հենց ինքն էր, որ երկար տարիների ստեղծագործական շփման արդիւնքով արտայայտուց՝ «Ժողովուրդն է ամենամեծ ըստեղծագործողը, սովորեցէ նրանից»։

Այսպիսի գործունէութեան համար էջմիածնի միջավայրը չափազանց նեղ էր։ Նա ձգուց լայն հորիզոնների, Տեղափոխուեց



ԿՈՄԻՏԱՍԱՐ

Գործ ՓԱԼՈՍ ԹԵՐԼԵՄԵԶԵԱՆԻ

Պոլիս, հայկական մշակոյթի խոշոր կենտրոններից մէկն այն ժամանակ, ծառալեց այսուղղ լայն գործունելութիւն:

Նա շյալողեցրեց Պոլտում իրականացնել իր մտադրութիւնը՝ ազգային կոնսերվատորիա բանալ, ազգի «մէծամեծները» չնըպաստեցին զործին, ասինք, թթական ըընապետութեան պայմաններում նա հնարաւոր էլ չէր: Բայց, նա ամէն տեսակի խոշինքուներ յաղթահարելով, կարողացաւ ոչ միայն ստեղծագործելու ու հազարաւոր ժողովրդական երկեր հաւաքել, այլև իր կողման բայմամարդ երկշամբերով տուեց բազմաթիւ համերգներ, հանդէս եկաւ հայրենիքում ու որտասահմանում՝ Փարիզում, Եվրոպայի մասնաւոր Արեւելի քաղաքներում, ամենուր հնչեցրեց իր ժողովրդի երաժշտութիւնը, այդ երաժշտութեան իր մակուտները: Երրորդայում նա հանդէս եկաւ նաև զիտական համաժողմիքում, մէջ՝ Հայ ժողովրդական, նաև հայկական միջազգարի արուեստաւոր երաժշտութեան հարցերի շուրջ:

Կոմիտասի այս բոլոր ելոյթներն անհամարէալ յաջողութիւն դասն: Քննազառները լրիշէ ու իմբաֆար կոմիտասին նոյն իսկ գերբնական յատկանիշներ վերագրեցին: Հայրենիքը կարուած հայերն ամենուր ասացին՝ «Կոմիտասը մեզ Հայաստան բերէց»: Նրա համերգներն ու դրոյցները նպաստեցին Հայ ժողովրդի ցըրի զանգուածների ազգային համախմբման, նրանց աղդամին զիտակցութեան արթնացման ու բարձրացման: Կոմիտասի ստեղծագործութիւնները, Հայ երաժշտութեան տեսութեան ու պատմութեան բնագաւառների նրա զիտական եղարյան նպատակութեան արժանացան նաև երրորդական խոշոր հեղինակութիւնների բարձր կնահատականին:

Այսպէս, զետես 90-ական թուսականների վերջին, Կոմիտասի գերմանացի ուսուցիչները նրան գրում էին. «Ենք խորապէս մտածուած զանախօսութիւնների միջոցով դուք մեղ խորունկ հայեացք գետի տուեցիք գէպի այն երաժշտութիւնը, որը մեզ ցարդ ցբեթէ անյարտ էր եւ որը մեզ՝ արեւմտեաններից շատ խան կարող է ուսուցմելու: Դուք արգի զիտութեան անդին ծառայութիւնն կարող էք մատուցանել, եթէ Զեր աշխատութիւնները հրապարակէք:

Կոմիտասի Փարիզի համերգների մասին (1906-1907), ուր կատարուել էրին նրա հայ գեղջուկ եւ հոգեւոր մեղեղիների մեներացային մշակումները, «Օրորս թերթը գրեց. «...Մենք ըմբույնեցինք բնակավայրի խոկ համը եւ զմայլեցանք զանակումին վրայ, որ նոյն ինքն Կոմիտաս վարդապետի բարձր հմտութեան և հանճարաւորութիւնն գործն է: Ու նուազ չափանշացանք Կոմիտաս վարդապետի տաղանդին ու հմտութեան վրայ հեղեղցական երկերուն մէջ՝ զոր ինքն իսկ երգեց ձայնով ու, որուն հնչինը՝ նորապէս արտայալուից, սրաւերը կը ցնցէր...»:

Այդ նոյն օրերին, նոյն առկղճագործութիւնների հիման վրայ «Մերելիր» միւզիամայն հանդէսը գնահատում էր Հայ ժողովրդական երաժշտութեան յատկանիշները, որակելով այն՝ «Ոչ եւրոպական, ոչ արեւելիան, այլ սեփական, բացառիկ ինքնատիպ նկարագիր ունեցող մի արուեստ»:

Տարբեր համերդներում կամ համերգներից դուրս Կոմիտասի ստեղծագործութիւններին ծանօթացել եւ դրանցով հիացել են վենան զինդին, կող Դերիսասին, Մ. Շահնշեհը, Ֆ. Շմիտը, Դ. Դե-Ալեքսանդրը, Ա. Ռուսևը, Բուրգո-Դյուկուգրէն, Ռ. Ռուլլանը, և ուրիշներ: Յայրանի է Դերիսասի կարծիքը, երբ նաև միայն «Անուունի» երդի հիման վրայ Կոմիտասին բնութագրել է որպէս մեծ ստեղծագործող: Մի շարք այլ նշանաւոր երաժիշտներ մէկից աւելի անդամ նշել են այդ գասախօսութիւնների զիտական բարձր արժէքը, որոնք Կոմիտասը կարգաց միջազգային երաժշտական ընկերութեան 1914 թուականի Փարիզի համաժողովին, երբ նրա հոգեւոր գործերի համերգն եւս զնահատուեց որպէս համաժողովի բոյրոր համերգներից ամենագրավիչը:

Այսպէս աստիճանաբար տարածւում էր Կոմիտասի՝ որպէս ինքնախափ կոմպոզիտորի եւ երաժշտ զիտականի համբաւը: Բայց Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին, երբ Կոմիտասի գործունելութիւնն էլ անսպասելիորէն բնդհատուեց, այս բոյրոր մոռացութեան արուեց: Կոմիտասի գործունելութիւնը բնդհատուեց 1915-ի սղբերգական իրադարձութիւնների հետեւանքով, երբ սեղի ունեցաւ իր գաժանութեամբ մարդկային ողջ պատմու-

թեան մէջ շլուած ցեղասպանութեան ակտով՝ երիտասարդ Թուրքերի կառավարութեան կարգադրութեամբ ոչչացուեց Արքաւութեան Հայաստանի բնակչութեան մեծագոյն մասը: Թէեւ Կոմիտասին աջանորդց միջնորդութեամբ վերադարձրին Կ. Պոլսու, բայց տեսածի ու վերապարձի տպաւարութեան տակ նրան հոգեկան հաւասարակշռութիւնը խախտուեց, երեւան եկան նաև հոգեկան հիւանդութեան նշանները:

Բուժելու նպատակով Կոմիտասին փոխազրում են Փարիզ, բայց թշկակունութեան միջոցները զրական արդինք չտուեցին: Դեռ երկար տարիներ Կոմիտասը հոգեկան հիւանդի վիճակում ապրեց Փարիզում: 1935 Թուականի Հոկտեմբերի 22-ին, 66 տարեկան հասակում նա վահճանուեց: Թաղուած է երեւանում, զիտութեան ու արուեստի զործիների պահիչուում:

Կոմիտասի՝ հանճարով օժտուած երաժշտի ու զիտնականի կեանքը, որ լի էր անխոնջ աշխատանքով ու պայքարով, անինացորդ նուիրուած էր հարազատ ձեղովորդին, նրա արուեստին: Կոմիտասի ազգավարիան աշխատանքները Հայ երաժշտութեան զարգացման համար վճռական դեր կատարեցին, քանի որ այն ժամանակ, Հայ զգալին կոմպոզիտորական դպրոցի ձեւաւորման շրջանում, համաշխարհային դասական եւ բաժշտութեան փորձը մարմնաւորելուց բացի, պահանջւում էր նաեւ ստեղծագործարար իւրացնել ազգային – ժողովրդական արուեստի զարաւոր աւանդույթները: Նրա ստեղծագործութիւնները Հայերի երաժշտական նոր մշակոյթի զարգացման համար լայն հեռանկարներ բացին, քանի որ դրանք Հայ երաժշտութեան մէջ ներդրեցին առանձինութեան մէջ գրային թագավորականի վրայ հիւնուած, բայց ժամանակակիցից կոմպոզիտորական արուեստի միջոցներով Հարստացած երաժշտական լեզու, ցոյց տուին այդ երաժշտութեան հետագայ զարգացման ճանապարհը:

Պատմական այս կարեւոր իւրեր կտառի բելով հանդերձ, Կոմիտասի ստեղծագործութիւնները բնաւ շթառամեցին եւ իրենց դեղարուեստական պարզութեան մէջ գնալով շարունակ աւելի փայլում են թարմութեամբ ու ինքնասպանութեամբ⁴:

Երեւան

Վերջին տասնամեակներին Կոմիտասի երկերը աւելի ու աւելի յաճախ են հնչում Հայուսուաֆից զուրու: Հայ երաժշտութեան տանօրեակներին կամ սովորական համերգ՝ ներին, Հայ երգախմբերի կատարմամբ Կոմիտասի խմբերցերը բազմից հնչել են Մասկուայութիւն եւ բազմաթիւ ունկնդիրների ու մասնագէտների անկեղծօրէն խոնարհեցրել կոմպոզիտորի մեծ արուեստի առաջ: Արտասահմանի մի քանի ականաւոր վոկալիստներ հանդէս են գալիս որպէս Կոմիտասի ժեներալ հիանալի մեջնաբանողներ: Մովսեսական Միութեան մէջ, ներոպայի շատ երկրներում եւ Ամերիկայում Կոմիտասի ստեղծագործութիւնները փոխազրուած վիճակում մեծ բաւականութեամբ ունենացուել են Արմենական լաւագոյն լրացին կուտարեսներից մէկի՝ Կոմիտասի անունը կրող Հայաստանի պետական կուրարատեական կառարամաբ:

Այս բոլորը Կոմիտասի ստեղծագործութիւնների մի նոր՝ երկրորդ կեանքի սկիզբն է: Թէեւ Կոմիտասի երկերը զենեւու թարդմանուած շնչն աշխարհի ապրելը ժողովութիւնների ժնուններով, բայց կասկածից վեր է երր դրանք մատչելի զառնան միջնազային երաժշտական (կատարադական եւ դրանինի) լայն հասարակութեան, առաջ կը բերե հեղինակի, նրա ստեղծագործութեան եղանակի նկատմամբ աւելի հւայտ մեծ հետաքրանութիւն:

Հայաստանում Կոմիտաս անունը պատկրատու է համաժողովրդական շերմ սիրով ու խորացոյն յարզանքով: Կոմիտասի երաժշտական – զրական մեծ ժամանակութիւնը, որի մի փոքր մասը նա կարողացաւ հրատարակել եւ որը նրա հիւանդութեան սկրինական շրջանում բաւական ցրիւ եկաւ, այժմ ատեմբանագրար յայտնաբերուում, հարագորդութիւն:

Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիան ձեռնարկել է Կոմիտասի երաժշտական ստեղծագործութիւնների, գիտական ու աղեղագրական աշխատութիւնների 12 հասունական ժողովութիւնների Հայաստանի գրատարակութեան, որի երթորդ համարը լոյս կը տեսնի մեծ երաժշտագրէտուի ծննդեան 100-ամեակի օրերին: